ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2024թ. **N ----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԷՄԻԼ ԴԻԼԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Մյասնիկյան պողոտայի հ.16/9 հասցեի հարակից տարածքից սկսվող և մինչև Սերո Խանզադյան փողոցի 1-ին նրբանցք ձգվող ճանապարհահատվածն անվանակոչել հայ սովետական էլեկտրատեխնիկայի մասնագետ, ԽՍՀՄ առաջին էլեկտրամոբիլների ստեղծող, Երկրորդ համաշխարհային պատերազմի Արևելյան ռազմաճակատի գործողությունների մասնակից, կործանիչ-օդաչու Էմիլ Դիլանյանի անվամբ՝ «Էմիլ Դիլանյան փողոց»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԷՄԻԼ ԴԻԼԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Էմիլ Մարկոսի Դիլանյանը ծնվել է 1917թ. դեկտեմբերի 31-ին, Երևան քաղաքում:

1935թ. ավարտել է միջնակարգ դպրոցը և մեկնել Դնեպրոպետրովսկ: Ընդունվել է Դնեպրոպետրովսկի համալսարանի շինարարական ֆակուլտետի նախապատրաստական բաժինը:

1936թ. վերադարձել է Երևան և ընդունվել Պոլիտեխնիկական ինստիտուտ: Դրան զուգահեռ զբաղվել է նաև աերոակումբով: Ավարտել է Յեյսկի ավիացիոն դպրոցը և դասավանդել այնտեղ:

1937թ. զորակոչվել է Կարմիր բանակ: 1942թ. մարտից Հյուսիսային նավատորմի ռազմաօդային ուժերում պայքարել է Նացիստական Գերմանիայի ռազմական ուժերի դեմ՝ օդից ծածկելով Մուրմանսկի հիմքը և հյուսիսային ավտոշարասյուները: Եղել է բանակի թևի հրամանատար: Մասնակցել է 15 օդային մարտերի, որոնցում անձամբ խոցել է թշնամու 4 ինքնաթիռ: 1942թ. օգոստոսի 5-ին օդային մարտերից մեկում խոցվել է, սակայն վիրավոր վիճակում կարողացել է վերադառնալ ստորաբաժանման վայր: Նրա ձախ ձեռքն անդամահատել են ուսից: Ռազմական գործիչը զինված ուժերի հանձնարարականով վերադարձել է Երևան և շարունակել ուսումը, որն ավարտել է պատերազմի ավարտին: Ընտրվել է Գերագույն խորհրդի պատգամավոր հայկական ԽՍՀ-ում:

1951թ. ընդունվել է Մոսկվայի էներգետիկայի ինստիտուտի ասպիրանտուրան: Պաշտպանել է թեկնածուական թեզ «Թռչող մեքենաների էլեկտրական սարքավորումներ» թեմայով: 1954թ. հիմնադրել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի էլեկտրական շարժիչի և արտադրական գործընթացների ավտոմատացման բաժինը, որը ղեկավարել է մինչև կյանքի վերջ.:

1956-1961թթ. եղել է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական ինստիտուտի էլեկտրատեխնիկայի ֆակուլտետի դեկանը: Գրել է դոկտորական դիսերտացիա: Արժանացել է բազմաթիվ ռազմական և աշխատանքային շքանշանների և մեդալների:

Էմիլ Դիլանյանը մահացել է 1986թ. ապրիլի 12-ին:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 17-րդ կետը՝ առաջարկվում Երևան քաղաքի Մյասնիկյան պողոտայի h.16/9 հասցեի հարակից տարածքից սկսվող և մինչև Սերո Խանզադյան փողոցի 1-ին նրբանցք ձգվող ճանապարհահատվածն անվանակոչել հայ սովետական էլեկտրատեխնիկայի մասնագետ, ԽՍՀՄ առաջին էլեկտրամոբիլների ստեղծող, Երկրորդ համաշխարհային պատերազմի Արևելյան ռազմաճակատի

գործողությունների մասնակից, կործանիչ-օդաչու Էմիլ Դիլանյանի անվամբ՝ «Էմիլ Դիլանյան փողոց»:

Երևան քաղաքի Մյասնիկյան պողոտայի հ.16/9 հասցեի հարակից տարածքից սկսվող և մինչև Սերո Խանզադյան փողոցի 1-ին նրբանցք ձգվող ճանապարհահատվածն Էմիլ Դիլանյանի անվամբ անվանակոչելու միջնորդություն է ներկայացվել որդու կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ